№ 11 Յունվարի 29 (Փետրվարի 10) 1880 Յունվարի 29 (Փետրվարի 10) № 11

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեան նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ հարկաւոր էր անել։—Ներքին տեսութիւն, ամակ արկվից։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—Խառնլուրեր։—«Մշակի» հեռագիրներ։— Յայտարարութիւններ։

ԻՆՉ ՀԱՐԿԱՒՈՐ ԷՐ ԱՆԵԼ

—

Յունվարի 26-ին Թիֆլիսի Ամարայի թատրոնում Ներկայացումն տրվեցաւ ի նպաստ սովատանջների։ Ներկայացման կարգադրողը ռուս «Тифлисскій Вѣстникъ» լրագրի խմբագրութիւնն էր։

Անկասկած գովելի է ռուս լրագրի խմբագրութեան արած գործը, բայց մենք մեզ թոյլ ենք տալիս ասելու որ մի այդպիսի ներկայացումով օգնել ջանալ սովատանջներին, նոյն է որ ուզենալ ծովը ցամաքացնել, կրելով ծովի ջուրը բաժակներով։

Իսկ կարծել, որ մի լրագրի խմբագրութիւնը կարող է յաճախ կրկնել այդ տեսակ ներկայացումները,—դա նոյնպէս աներևակայելի է։

Այնպիսի գործ, ինչպէս սովատանջներին օգնելը, մի մասնաւոր ինիցիատիվի գործ չէ, դա մասնաւոր ջանքերի այժերից վեր է։

Երբ որ երկրի այլ և այլ անկիւններում և նոյն իսկ Թիֆլիսում տիրապետում է թանգութիւնը և մի քանի տեղերում մինչև անգամ յայտնվել է սովը,—այդ տեսակ դրութեանը օգնելու համար բաւական չէ մասնաւոր օգնութիւն, այլ այդ օգնութիւնը հարկաւոր կը լիներ կազմակերպել լայն, ընդարձակ հասարակական հիմքերի վրա։

Այդ պատճառով մենք առաջարկում ենք որ մեր քաղաքի ներկայացուցիչներից, մեր քաղաքային ինքնավարութեան անդամներից, մեր ձայնաւորներից և մի քանի ընտրված քաղաքացիներից կազմվի թանգութեան տևողութեան ամբողջ ժամանակ մի մշտական մասնաժողով, որ հոգայ ամեն տեսակ միջոցներով փող ժողովելու սովատանջներին օգնելու համար։

Այդ մասնաժողովը կարող է և ներկայացումներ և բալեր և կոնցերտներ տալ, և կազմել ալէոդրիներ ու հաւաքել գումարներ ստորագրութեամբ, տնօրինել հրապարակական դասախօսութիւններ, և այլն....

Այդ տեսակ ծանր րոպէներում մենք միշտ ստիպված ենք ակամայ յիշեցնել մեր ընթերցողներին մեր վաղուցվայ միտքը, թէ անհրաժեշտ կը լիներ ունենալ Թիֆլիսում մի մշտական ընկերութիւն Բաղուի Մարդասիրական ընկերութեան պէս, միայն աւելի լայն պրոգրամայով, որ մանաւանդ մեր հասարակական կեանքի ծանր րոպէներում մեծ ծառայութիւն կարող էր անել մեր երկրին։

Բայց դժբաղդութիւնը այն է, որ մեր հասարակութիւնը երբէք չէ մտածում այդ տեսակ գործերի վրա, մինչև որ այս կամ այն վտանգը չէ սպառնում։

Հէնց որ վտանգը անցնում է, դարձեալ ամեն բան մոռանում ենք.... Իսկ երբ վտանգը գալիս է,—ուշ է լինում ձեռնարկել մի մշտական ընկերութեան հիմնելուն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

—

30 յունվարի

Ցայտնի է որ այս 1879-80—ակադեմիական տարում փոխվեցան համալսարանական ուսանողական կանոնները, որոնք թէև իրանց մասնաւոր խստութեամբ զանազանվում են հին կանոններից, բայց մի և նոյն ժամանակ այնքան խիստ չեն ինչպէս որ ենթադրում էին ուսանողք մինչև նրանց հրատարակվելը։ Այդ կանոնները արդէն բաժանված են Մոսկվայի, Ղազանի, Կիեվի, Օդէսայի համալսարաններում և վերջին ժամանակներս բաժանվեցան Խարկովի կենդանաբուժական ճեմարանի և յեսոյ համալսարանի ուսանողաց մէջ, որոնք և ընդունեցին նրանց, և ստորագրվեցին ուսումնական վարչութեան կողմից առաջարկած առանձին նշանակեալ թղթերի վրա։ Ստորագրութիւն չը տուող ուսանողի՝ համաձայն ուսումնական վարչութեան վճռին պէտք է արձակվէին ճեմարանից կամ համալսարանից, ինչպէս նոր կանոններին չը հնազանդվողք։ Այդ կանոնները կազմված են հին կանոններից մի քանի փոփոխութեամբ։ Ահա այդ փոփոխութիւնները.—1) Ամենայն մի ուսանող պարտ է ամենայն ակադեմիական կէս տարվայ սկզբում ներկայանալ տեսչին նրանից երկու տոմսակ ստանալու համար, մէկը համալսարանական քաղաքում ապրելու և միւսը լեկցիաները այցելելու իրաւունք ունենալու համար։ Ամենայն ամիս այդ տոմսակները պէտք է ներկայացնեն տեսչին, նրանց վրա նշան դնելու համար, որովհետև առանց այդ նշանին այդ տոմսակները կորցնում են իրանց նշանակութիւնը։ Այս կանոններին չը հետևողները արձակվում են ճեմարանից կամ համալսարանից։

2) Ուսանողք պարտ են այցելելու բոլոր լեկցիաները, ով որ երեք օր չարունակ չէ եղել համալսանում կամ ճեմարանում պարտ է իր բացակայութեան պատճառը իմացնելու տեսչին, հակառակ դէպքում տեսուչը պարտ է նրա մօտ գնալ, բացակայութեան պատճառը իմանալու և եթէ ուսանողը հիւանդ է, հարկաւոր օգնութիւնը տալու։

3) Ուսանողք ժամանակաւոր արձակման տոմսակ չեն կարող ստանալ ուսումնական վարչութիւնից, մինչև որ ոստիկանութեան կողմից չը ներկայացնեն վաւերացրած մի տոմսակ, որը բացատրէր թէ ուսանողի արձակմանը ոստիկանութեան կողմից արգելք չը կայ։

4) Ուսանողք, որոնք ունեն մի որ և լցէ գործ, որը չէ վերաբերվում ուսմանը, պարտ են դիմել տեսչին։ Տեսուչը կարող է ուսանողաց համար տուն վարձել և միւս ապրուստը հոգալ նրանց ստիպենդիայով, եթէ դէպքը պահանջի, փոխանակ նրանց յանձնելու ստիպենդիան։ Ուսանողական կանոններին չը հետևող ուսանողք ենթարկվում են հետևեալ պատիժներին։

ա) Առաջին անգամ ենթարկվում են տեսչի նկատողութեանը։

բ) Ազատութիւնից զրկվում են 7 օրից ոչ աւելի ժամանակով։

գ) Վերատեսուչը վարչութեան առաջ զգուշացնում է ուսանողին և ստորագրութիւն է առնում, որ նա մի ուրիշ յանցանքի ժամանակ կարձակվի համալսարանից կամ ճեմարանից։

դ) Ուսանողը արձակվում է համալսարանից կամ ճեմարանից մի տարի ժամանակաւ, միայն նրան իրաւունք է տրվում իսկոյն մի ուրիշ բարձր ուսումնարան մտնելու։

ե) Արձակում են ուսանողին առանց վերոյիշեալ իրաւունքների չարունակաբար մի կամ երկու տարի։

զ) Արտաքսում են ուսանողին համալսարանից կամ ճեմարանից, այս վերջին միջոցին նա 3 տարի ժամանակաւ իրաւունք չունի մտնելու մի որ և լցէ բարձր ուսումնարան, իսկ այդ ժամանակի լրանալուց յետոյ կարող է միայն իր առաջվայ ուսումնական վարչութեան համաձայնութեամբ և նրա գլխաւոր իշխանութեան պատասխանատուութեամբ կրկին ընդունվել։

Բացի դրանից այն ուսանողք, որոնք նիւթական օգնութիւն են ստանում վարչութեան կողմից իբրև պատիժ, կամ ժամանակաւորապէս և կամ բոլորովին զրկվում են այդպիսի օգնութիւնից։

Վերոյիշեալ կանոններին պարտ են հետևելու և ազատ ունկնդիրները։

Այս կանոնները չեն վերաբերում Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանողներին, որովհետև նրանց համար կան առանձին կազմված և հրատարակված կանոններ։

Թիֆլիսեցիներին էլ այժմ յայտնի է, որ եկող տարվայ համար, Թիֆլիսի թատրոնի անտրեպրենեօր պ. Պալմը հրաւիրել է Թիֆլիսի բեմը Խարկովի ռուսաց օպերայի ամենանշանաւոր ոյժերին և նրանց համաձայնութիւնը արդէն ստացած է։ Այդ պատճառաւ աւելորդ չեմ համարում այս նամակաւս ըստ կարողութեան ծանօթացնել Թիֆլիսի հասարակութեանը այդ երգչուհի—դերասանուհի և երգող դերասանների հետ։

Թիֆլիսի բեմը հրաւիրված արտիստները են տիկին Պավլովսկայա իր ամուսնու հետ, տիկին Կրուտիկովա. և պ. պ. Վասիլեվ և Բապօրտ։ Ես կաշխատեմ կարճառօտ կերպիւ ծանօթացնել դրանցից ամենայն մէկի հետ։

Սկսենք տ. Պավլովսկայից, որովհետև դա է մեր հասարակութեան սիրելին։ Պավլովսկայան մի զօրեղ ու նուրբ ձայն ունեցող երգչուհի է (սոպրանօ) շատ լաւ իշխում է իր ձայնի վրա և մի և նոյն ժամանակ իր խաղը հասցնում է մինչև վերին աստիճանի կատարելագործութեանը։ Թիֆլիսցիները կը տեսնեն, որ նա իրաւունք ունի մեր հասարակութեան առաջին սիրուհի հաշվելու։ Նրա ձայնը թէ ամենացածր, թէ միջին և թէ ամենաբարձր նօթաները միանման նուրբ հնչում են և մի սաստիկ տպաւորութիւն են թողնում լսողի վրա։ Պավլովսկայի տաղանդը ստուգելու համար մենք օրինակ կը բերենք Մարգարիտայի (Фаустъ) և Մարիայի (Дочь полка) *) դերերը, որոնք իրանց բնաւորութեամբ շատ մեծ զանազանութիւն են կազմում իրար մէջ։ Այնու ամենայնիւ դա Պավլովսկային անմատչելի չէր. ինչպէս որ նա անմման գեղեցիկ կատարում է Մարգարիտայի խիստ կլասիկական դերը, այնպէս անմման գեղեցիկ կատարում է Մարիայի, հասարակ, զինվորական գնդում մեծացած ու նրա կեանքի բնութեամբը սնդված մարկիտանտկայի դերը։ Պէտք է ասել, որ այդ վերջին դերը շատերին չէ յաջողում, մինչդեռ Պավլովսկայան նրան շատ լաւ կատարում է։

Եւ այդ է պատճառը, որ հասարակութիւնը չէ կարող նրա ամեն մի անգամ բեմը դուրս գալուն չեզոք մնալ, և իր համակրութիւնը և սէրը ցոյց

*) Հարկաւոր չէ խառնել Дочь полка օպերան նոյն անունով գտնվող օպերետտայի հետ։

չը տալ անվերջ և սրտալից ծափահարութեամբ։

Բացի այդ դերերից Պավլովսկայի ամենալաւ դերերն են Ռոզինա (Севильскій цирюльникъ), Վիոլետտայ (Травіата), Ցերլինա (Фра-Дъяволо), Ամիդա (Аида) և այլն։ Այսքանը բաւական է, եթէ ոչ կարելի է ձանձրութիւն պատճառեմ ընթերցողին, այսքան երկար խօսելով Պավլովսկայի վրա։

Կրուտիկովա (меццо-сопрано) սա նոյնպէս Խարկովի հասարակութեան սիրուհին է, նա մանաւանդ այս վերջին օրերս, երբ նա դուրս եկաւ ելմը Ամիդա օպերայի (Аида) Ամներիսի դերում. ներկայ գտնվողները բոլորն էլ զմայլում էին։ Դա ևս զօրեղ ձայնով և տաղանդաւոր մի երգչուհի է, զուրկ չէ և երաժշտական չկոլայից։ Շատ դերերում նա նոր և ուղիղ տիպեր է ստեղծում, և այդ դերերում իր խաղը հասցնում է մինչև վերին աստիճանի ընականութեանը։

Հիմա ասենք մի քանի խօսք երգիչների մասին. ձայնի վերաբերութեամբ առաջին տենորը Վասիլեվն է։ Եւ ճշմարիտ նրա ձայնը շատ քաղցր և նուրբ է, և այդպէս էլ մնում է երաժշտական ամենաբարձր նոթաներում, որոնց նա երգում է առանց դժուարութեան։ Բայց ափսոս, որ նա զուրկ է դերասանական չարժումներից, այդ պատճառաւ է, որ նա բեմի յետևից երգելով ամենից մեծ տպաւորութիւն է գործում, քան բեմի վրա։ Եթէ ասենք, որ իր սեփական աշխատութեամբն է հասել իր այժմեան կոչմանը, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչու մենք իրաւունք չունենք պահանջել նրանից այն, ինչ որ պահանջում ենք մի որ և իցէ արտիստից, որը աւարտել է իր արհեստը մի ուսումնարանում։ Ահա թէ ինչու Սաբինինի դերը (Жизнь за царя) աւելի և աւելի ուղիղ և չքեղ է, քան Ֆաուստ (Фаустъ) կլասիկական դերը, որը պահանջում է յայտնի արտիստիական չկոլա։

Երրորդ տենոր է հաշվում ինքը թատրոնի անտրեպրէնեոր Ռապօրտ, որի ձայնը արդէն մասամբ կորված է, բայց չը նայելով դորան նա այնպիսի դերերում, որտեղ չը կան աւելի բարձր նոթաներ, իր խելացի խաղովը ու իրան բեմի վրա ազատ բռնելովը լաւ տպաւորութիւն է թողնում լսողի վրա։ Ասածս ապացուցանելու համար օրինակ եմ բերում նրա Մարկիզի դերը (Фра-Дъяволи)։ Նա երբեմն ծառայում էր Ս. Պետերբուրգի բեմի վրա։ Վերջացնելով նկարագրութիւնս, աւելորդ չեմ համարում ասել մի քանի խօսք ևս Պաւլովսկիի (Պաւլովսկայայի ամուսին) վերաբերութեամբ։ Նորա ձայնը բաւականի զօրեղ է, թէև քիչ անախորժելի (բարիտոն)։ Այնու ամենայնիւ մի քանի դերերում նա իր խելացի խաղով բաւականութիւն է տալիս հասարակութեանը, ինչպէս Ֆիգարոի դերում (Севильскій цирюльникъ)։

Ռ. Կ.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Յունվարի 11-ին

Տեղւոյս հայ երիտասարդները անցեալ դեկտեմբերի 21-ին խաղացին Գ. Սունդուկեանցի «Խաթաբալա» պիեսան։

Այս ներկայացումից առայժմ գոյացաւ 818 բուբլի, որից հանելով 338 բուբլի թատրոնի ծախսը, մնացեալ 480 բուբլին խաղացողները անօրինեցին բաժանել այսպէս. նախ՝ 200 ր. ձեր միջնորդութեամբ ուղարկել մեր հռչակաւոր «Արարատեան» ընկերութեան, թողնելով սրան 'ի գործ ածել այն չնչին գումարը ըստ իր կամաց կամ ուսումնական պիտոյից համար և կամ հացի, վասն զի, ինչպէս տեսնում ենք լրագրներից, սովը իր սարսափելի հետևանքներով արդէն մուտք է գործել Վանի կողմերը. իսկ 280 ր. բաժանել 'ի միջի չքաւոր ուսանողաց հետեւեալ կերպիւ. 3 ուսանողաց տալ 120 ր. իւրաքանչիւրին 40 ր., 4 ուսանողաց տալ 120 ր. իւրաքանչիւրին 30 ր., 2 չքաւոր երիտասարդներին—15-կան բուբլի իւրաքանչիւրին։ Կը մնայ, այնու ամենայնիւ 10 ր. որ ստանալիք ապառիկների հետ 'ի միասին կը բաժանվի դարձեալ հայ ուսանողաց։ Այս վերջիններիս վերաբերութեամբ կայացած վճիռը արդէն գործածվեցաւ, այժմ մեզ մնում է միայն դիմել ձեր միջնորդութեան, և խնդրաբար խնդրել, որ այս 200 ր. չուռով հասուցանէք յիշեալ «Արարատեան» ընկերութեան։ Բաց յայտնէ, կը խնդրեմ ձեզ, յարգոյ խմբագիր, տեղ չնորհել իմ այս փոքր հաշիւս ձեր պատուական «Մշակի» էջերում 'ի գիտութիւն ամենեցունց։

Ընդունեցէք և այլն

Խ. Յ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

19 յունվարի

Օրերումս ստացանք «Արարատեան» ընկերութեան 1878—79 թվի գ. տեղեկագիրը։ Այդ տեղեկագրին նայելով Թիֆլիսից յետոյ Նուիրատուութեանց քանակութեան կողմից Ախալքալաքը առաջին տեղն է բռնում։ Այո՛. մխիթարական է տեսնել որ մի փոքրիկ քաղաք, չը նայելով իր սահմանափակ միջոցներին, իր առևտրի ընկած դրութեանը, չէ խնայում իր կօպէկները համարիւն եղբայրների ու քոյրերի կրթութեան գործին նուիրելու։ Ի հարկէ ամենայն ոք ազատ է իր նուիրատուութեան մէջ, բայց ինչ ուզում են թող ասեն, երբ մարդս բաց է անում Թիֆլիսի նուիրատուաց և գաւառացիների ցուցակը, ակամայաբար նրանում զարթնում է մի հարց, ինչին պէտք է վերաբերել այն հանգամանքը, որ Թիֆլիսի հարիւր հազարների և մինչև անգամ միլիօնների տէր մի ազատ նուիրում է յիշեալ ընկերութեանը միայն մի բուբլի, կամ 20 կոպ.... Այդ հանգամանքը հաստատում է պ. Մելիքզադէի «Հայ երիտասարդութիւն» յօդուածում ասածը, թէ «գաւառացի հայի մէջ աւելի վառ է մնացած սէրը դէպի իր ազգութիւնը քան թէ Թիֆլիսեցու մէջ։» Այո՛, այդ այդպէս է, որովհետև գաւառներում դեռ չէ տարածվել այն ախտը՝ որին նորաձևութիւն են անուանում։ Ես յիշում եմ որ դուք անցեալ տարվայ «Մշակի» մէջ յանդիմանում էիք հայերին (գլխաւորապէս Թիֆլիսցուն) որ նրանք յարաբերութիւններ չեն կապում օտարազգիների հետ։ Այո՛, դա շատ լաւ կը լինէր, եթէ հայը ազգային հպարտութիւն ունենար, բայց քանի որ նրան պակասում է այդ, նա միայն նմանվում է օտարին, ինչպէս դուք ասում էիք, հագուստով, արտաքին ձևերով և այլ ևս ոչնչով։ Օտարամոլութիւնը մեր հայերիս մէջ մեծ դեր է խաղում. լնձ յայտնի են անձինք, որ հայոց եկեղեցում մի կօպէկ չեն թապախը դցում, իսկ օտարի եկեղեցում երեք բուբլի են գցում, հայոց մի ընկերութեան կամ ուսումնարանի ոչինչ չեն նուիրում, իսկ օտարազգի հիմնարկութիւններին հարիւրներ են տալիս։ Մի բան միայն կայ, այն է, որ այդ նուիրատուներից իւրաքանչիւրը մի ակնկալութիւն ունի, սպասում է որ և իցէ մի վարձատրութեան, իսկ «Արարատեան», «Կիլիկեան» ընկերութիւններ կամ տեղական ուսումնարաններ ինչով պէտք է բաւականութիւն տան մեր վառասէր հային, ուսումնաւարտ աշակերտներով, դրա համար նա պէտք իսկապէս հայ լինի և ոչ կոսմոպոլիտ։

Ինչպէս անցեալ նամակումս յիշած եմ՝ մեր քաղաքում բացվում է ընթերցարան։ Ի նկատի ունենալով որ մեր իգական սեռը չէ կարող այցելել արական ընթերցարանը, այդ պատճառով որոշվեցաւ օրիորդական դպրոցին կից մի սենեակը յատկացնել կանանց ընթերցարանի համար, որը կը կազմէ արական ընթերցարանի մի մասը, այդ պատճառով որոշվեցաւ բացի ընթերցարանում ըստացված հայ և ռուս պարբ. հրատարակութիւնները, բերել տալ ձեռագործի և կարի համար «Модный Свѣтъ» չարամթերթը և մի քանի գրքեր տնտեսական, առողջապահական և բժշկականութեան ու դաստիարակութեան վերաբերեալ բովանդակութիւնով։

Շնորհակալութիւն մի քանի պարոնների, որոնք պ. Ցարութիւնեանցի տան հրաւէրքում նուիրել էին յօգուտ ընթերցարանի 80 ր., նոյնպէս պ. Վ.-ցի անում նուիրել էին նոյն հիմնարկութեանը 70 բուբլի։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, 16 յունվարի

Խոնարհաբար խնդրեմ տեղի տալ «Մշակ» լրագրի էջերումը յետադայ երկու տողին։

Պարտաւոր գտնվում Ս. Յովհաննէս Մայր եկեղեցոյ մոտից և ելից մատեանը ներկայացնել Գանձակայ հոգևոր կառավարութեանը, խոնարհաբար հրաւիրում եմ ծխական ժողովրդականաց յիշեալ եկեղեցւոյ, սկսեալ ամսոյս 25-էն մինչև 15-ն փետրվարի ներկայ ամի վերահասողութիւն անել մեր երեցփոխանական բոլոր հաշիւներին վասն 1879 ամի և վաւերացնել ստորագրութեամբ կամ յայտնել իրենց նկատողութիւնը, եթէ որ և իցէ թերութիւն կամ անկանոն ծախք գտնեն։—Յիշեալ ժամանակաւորեալ մատեանը յանձնված է մոմավաճառ Յարութիւն Յակոբեանին՝ մայր եկեղեցւոյ դաւթումը, որ առաւօտեան և երեկոյեան ժամերումը ամեն օր բաց է ի զննութիւն ծխականաց։—Եթէ քաղաքիս միւս եկեղեցեաց ժողովրդականք կամենան կարող են տեսնել մեր մատեանը վասն տեղեկութեան։

Հրաւիրում եմ նոյնպէս պ. պ. կոնտրօլեօր *** Եսամոլեանցին իր անմեղանչական խմբովը, եթէ հետաքրքիր են, թող նայեն մատենին և տեսնեն թէ մենք ինչ իրաւամբ ենք փողեր ստացել եկեղեցական գետնի վրա այգի անկողներից։—Սրանից աւելի այդ խմբին և նորա լրագրական վարարանութեանը հարկ չենք համարում պատասխան տալու, որովհետև այդ պարոնները, ունենալով իրենց պարապմունքն պ. Եսամոլեանցին վաղուց է աշխատում են դիպչել մայր եկեղեցւոյ և քաղաքիս երկսեռ դպրոցաց չահերին, յանուն պաշտպանութեան պարզամտաց և այլն և այլն։

Երեցփոխան Ն. Տեր-Ներսէսեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 19 յունվարի

Ինչ և իցէ լուր կամ համբաւ, եթէ փոքր ի շատէ ուշադրութեան արժանի է, չեմ սխալվում կարծել, հրապարակաւ հանդէս հանելն հարկաւոր է։ Վասն որոյ պարտ ինձ համարելով ծանուցանում եմ հետեւեալ տեղեկութիւնը։

Բարեգործութիւնով վարժ աջ ունեցող մի պարոն (կ. Պ. որ գտնվում է փ. քաղաքում) չը դադարելով իր բարի սովորութիւնից, պատրաստված է եղել ընծայելու «Արարատեան» ընկերութեան քանի մի հարիւր բուբլիներ։ Պատուական «Մշակ» օրագրի միջոցով ձեր ուշիմ խորհուրդը, «Արարատեան», «Կիլիկեան» և այլ ընկերութիւնները միանալու մասին, երբ հասնում է պարոնին, յանկարծ նորա աղնիւ մտքին այն վսեմ խորհուրդը այնպիսի մի ջերմ հաւանութիւն է պատճառում, որ հարիւրները փոխարկում է հազարների, սակայն նուիրելը թողնելով զկնի միութեան։ Բայց երբ պէտք հասնեն այն սիրալի օրերը, որ ցնծան այն հազարները։ Այն անձինք որ ունեն ընկերութիւնները միացնելու զեկը ձեռին, երանի չը յապաղին յառաջ մղել, և ընդհանուր ազգին մեծաշահ գործը փութով դլուխ բերեն։

Նիկողոս Նիկողոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ մատդրութիւն կայ այնտեղ մի հասարակական այգի չինել։ Այդ գործի համար հասարակութիւնը վճռեց 1612 բուբլ ծախսել։

—

Մեզ գրում են ՎԱՐԴԱՇԷՆ գիւղից, որ տեղական ուսումնարանը բացվել է դեկտեմբերի ըսկզբներում։ Թեմական տեսուչը այցելեց այդ ուսումնարանին։ Ցեսչի ասելով շատ վրացիներ խնդրում են, որ իրանց որդկերանցը ընդունեն այդ ուսումնարանը։ Թեմական տեսուչը անբաւականութիւններին տեղի չը տալու համար արդելել է դրանց ընդունելը։

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ լսվում է թէ այնտեղ կարգադրութիւն է արած, որպէս զի իւրաքանչիւր գիւղ 10 ֆունտ կարբոլեան թթու վեր առնէ գիւղացիների օդը մաքրելու համար։ Աւելի լաւ չէր լինի, նկատում է թղթակիցը, գիւղացուն դուրս բերել անասունների ընկերութենից, մաքրել տալ նրա դրան առաջը կիտված անմաքրութիւնները և յետոյ նրան կարբոլեան թթու տալ։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են «Այստեղ մի խումբ աւաչադէմ երիտասարդներ մի քանի անգամ ժողով կազմելով. որոշեցին մի հասարակական ընթերցարան հիմնել։ Օրերումս որանք իրանց մէջ ստորագրութիւն բանալով լրագիրներ բերել տալու համար մինչև 100 ր. փող ժողովեցին և այդ փոդերը ուղարկեցին Թիֆլիս և այդտեղից անհամբեր սպասում են լրագիրների ստանալուն։ Շնորհակալութիւն այդ լաւանդատ պարոններին։»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ Սխալցխայի և այլ տեղերի հայ վաճառականները իրանց մէջ ստորագրութիւն են բացել Արդահանում մի փայտաշէն հայոց եկեղեցի կառուցանելու համար։ Նուիրատուութիւններից առժամանակ 1500 ր. է գոյացել և ստորագրութիւնը դեռ չարունակվում է։ Եկեղեցու չինութիւնը մի պարոնի արդէն յանձնված է 2500 բուբլով։

—

Ինչպէս յայտնի է, այժմ ԹԻՖԼԻՍԻ Ամարային թատրոնում, բացի հայոց ներկայացումներից տրվում են և վրաց թատրոնական ներկայացումները։ Մինչև որ հայերը մեծ մասամբ տալիս են ֆրանսիական խոհանոցի ամենափտած բոմանտիական պիեսաները, վրացիները մեծ մասամբ ներկայացնում են կամ Մոլիերի պիէսաները և կամ իրանց կեանքից վերցրած ինքնուրոյն, կենդանի և ժամանակակից գրուածները։

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ զանազան ամբարներում ալիւրի մեծ պահեստներ կան։ Մեր վաճառականները, օգուտ քաղելով հայի թանգութենից, առնում են մեծ քանակութեամբ ալիւր, դարսում են այդ մթերքը պահեստներում և սպասում են որ հայը դարձեալ թանգանայ, որպէս զի աւելի էլ մեծ գնով ծախեն ալիւրը։ Մենք կատարելապէս համաձայն ենք այն մտքի հետ, թէ հարկաւոր կը լինէր որ մեր քաղաքային վարչութիւնը հետախուզէր այդ ամբարները և մի և նոյն ժամանակ էկսպերտների միջոցով քննել տար մեր չարչիների ձեռքով ամբարված ալիւրի յատկութիւնը։

—

Ընթերցողը կարդացած կը լինի «Մշակի» № 9 մէջ խորէն վարդապետ Ստեփանէի նամակը։ Խորէն վարդապետը ի հարկէ սաստիկ հիացած է Թիֆլիսցիներից, որ կարողացել է մի ամսվայ մէջ հաւաքել մեր քաղաքում 10,000 բուբլ։ Ճշմարիտ է, պէտք է զարմանալ հայը սուրբի եռանդի և աշխատասիրութեան վրա, բայց մենք կը ցանկանայինք, որ այդպիսի եռանդ դործ դրվեր աւելի արդիւնաւոր գործի վրա, քան թէ Ս. Էջմիածնի ճեմարանի համար նպաստներ հաւաքելու գործի վրա։

—

Այս օրերս ներկայացաւ խմբագրատուն ԹԻՖԼԻՍԻ նահանգական վարչութեան պաշտօնեան իշխան Էրիստով, որ վարում է քաղաքիս տպարանների և գրավաճառանոցների տեսչի պաշտօնը և յայտնեց մեզ որ Կովկասեան Ցէնզուրական Մասնաժողովը պրօցէս է սկսում և արդէն գանգատվել է «Մշակի» դէմ, մի քանի լուրերը առանց ցէնզուրական թոյլտուութեան տպելու պատճառով։

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ հետեւեալը։ «Մեր այստեղի մի քանի պարոններին, որոնց ամբողջ գիտութիւնը պարունակվում է Սալանթեանի քերականութեան մէջ, երբ առաջարկում էք ստորագրվել լրագրին, կամ ընթերցարանի մէջ անդամ գրվել, պատասխանում են՝ ինչ հարկաւոր է մեզ ընթերցանութիւն.... Եւ ճշմարիտ այդ տեսակ պարոնների ուսուցիչը, Տեր-Բէկլարը միթէ ուսումնական չէր.... Ով որ հայցական, բացառական ու դերբայ բառերը գիտէ,—արդէն ուսումնական է, ամեն բան գիտէ։ Ինչ հարկաւոր է լրագիր կարդալ։»

—

Շնորհակալութեամբ ստացանք «Մուղայք Հայաստանի» նոր երգարանը, որ լոյս ընծայեց Ա. Ց. Շահազիզեանց-Կամսարական։—Գիրքը տպված է ներկայ 1880 թվին Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանի տպարանում։

—

Յունվարի 24-ին ԹԻՖԼԻՍԻ Ամարային թատրոնում, հայոց ներկայացման ժամանակ, երբ պէտք է տային «Մի կնոջ տանջանքը» պիեսան, և արդէն «Գիշերվայ սարը խէր է» վոդեվիլը վերջացած էր, յանկարծ անասելի աղմուկ լսվեցաւ բեմի ետևից։ Աղմուկի դադարելուց յետոյ անմիջապէս դուրս եկաւ դերասաններից մինը և յայտնեց որ պ. Ադամեանի յանկարծակի հիւանդութեան պատճառով «Մի կնոջ տանջանքը» չի խաղացվի, այլ կը ներկայացվի «Էս էլ քի մոցիքութիւն» պիէսան։ Ժողովրդի մեծ մասը դուրս եկաւ թատրոնից յետ դարձնելով իր տոմսակները և փող յետ պահանջելով կասայից։ Ջանաղան լուրեր են հասնում մեզ վարագոյրի ետև պատահած անախորժ անցքի մասին։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Երրորդ Ոսկի» մանկական գիրքը, թարգմանութիւն Յարութիւն սարգսեանց Աղանեանցի (Ռաքելեանցի)։ Այդ գիրքը ռուսերէն լեզուով պարգևատրված էր Ս. Պետերբուրգի Ֆէօքելեան ընկերութիւնից։ Գրքի հայերէն թարգմանութիւնը տպված է ԹԻՖԼԻՍՈՒՄ Ա. Մէլիք-Շահնազարեանցի տպարանում 1879 թվին։

—

«Тифл. Вѣстн.» լրագրում կարդում ենք։ «Ճանապարհների Կովկասեան վարչութեանը սարերից հաղորդում են յունվարի 25-ից որ Կովկասեան

սարերում եղանակը պարզ է, ցուրտը հասնում է 3 աստիճանի։ Ձիւնակոյտերը խտակվում են, այնպէս որ կարելի է անցնել թէ բախիրներով և թէ կառքերով։»

—

Յունվարի 28-ին, երկուշաբթի օր, ԹԻՖԼԻՍԻ հայոց գերեզմանատան եռև գտնված դաշտի վրա մահվան պատժին դատապարտված աւազակ Ցատո Յուլուկիձէ կախվեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Մի քանի օր շարունակ Պէշտի հրապարակների վրա խռովութիւններ ու աղմուկներ էին լինում։ սկզբում կարծում էին թէ դրանք պարլամէնտական զանազան կուսակցութիւնների ինտրիգաներ են, բայց շուտով զգացին որ այդ խռովութիւններն արդասիք են դաղտնի դիտաւորութիւնների։

Զը նայելով որ շատ առիթներ կան ենթադրելու, որ այդ խռովութիւնները ծնունդ են միջազգային մեքանայագործութիւնների, բայց և այնպէս մինչև այժմ դեռ ոչինչ հաստատ և որոշ եզրակացութեան չէ հասել իշխանութիւնը, և ամբոխը բաւականանում է միայն զանազան ենթադրութիւններով։

Իսկապէս ասած, շատ դժուար էլ է հասկանալ մի այսպիսի դաղտնիք, որովհետև խռովարարները ոչինչ պարագլուխ, ոչինչ առաջնորդ չունեն, որոնցից կարելի լիներ եզրակացնել թէ նրանք ինչի են ձգտում։ Ցանկարծ երևում են ահագին խմբեր, և կարծէք նրանց բոլոր դիտաւորութիւնները միայն նրանում են կայանում, որ շփոթեն հասարակական հանգստութիւնը, որովհետև նրանք աղմուկներ են բարձրացնում և պատուհանների ապակիներ են ջարդում։

Ընդհանրապէս կարծում են, որ այդ խռովութիւնները սոցիալական ցուցմունքներ են։

Ուրիշ բանի էլ դժուար է վերաբերել այդ ցուցմունքները, որովհետև մինչև այժմ Պէշտի քաղաքական բոլոր դոյների կուսակցութեանց մէջ երբէք տեսնված չեն այսպիսի դժտութիւններ. բայց և այնպէս կասկածներ կային, որ իբր ընդդիմադրական կուսակցութիւնն էր այդ ցուցմունքների պարագլուխ. բայց ընդդիմադրական կուսակցութիւնը սաստիկ թշնամաբար է վերաբերվում դէպի այդ շարժումները, մի և նոյն ժամանակ, նա յոյս է յայտնում, որ այդ խռովութենից կարելի է պարլամէնտի համար օգտակար հետևանքներ դուրս բերել։ Նա բոլոր յանցանքը դցում է Տիսսի վրա, և նրան է պատասխանատու համարում բոլոր այն վնասակար հետևանքների համար, որոնք կարող են առաջ դալ ներկայ խռովութիւններից։ Կառավարութիւնն էլ իր կողմից պաշտպանվում է ասելով, որ վերջին ժամանակներս պատահած բազմաթիւ հրդեհների ու զանազան անկարգութիւնների պատճառը, ոչ թէ կառավարութիւնն է, այլ հնձի նուազութիւնը. հեղեղներից առաջացած թշուառութիւններն ու գլխաւորապէս ընդդիմադրական մամուլի զրդռիչ յօդուածները։

Վերջին ժամանակներս Պէշտից հաղորդում են եւրոպական զանազան լրագիրներին, որ այդտեղի յուզմունքները բոլորովին պարզ յայտնվեցան, որ ռամկասոցիալականների ցուցմունքներ են։

Տեղական իշխանութիւնը մի յայտարարութիւն հրատարակեց, որի մէջ նա դիմում է ունգարական մայրաքաղաքի աշխատասէր դասակարգին և խնդրում է նրանից՝ հեռու պահպանել իրան այդ տեսակ թշնամական ցուցմունքներից և օգնել իշխանութեանը վերականգնել ժողովրդական հանդարտութիւնը։ Մի և նոյն ժամանակ նա դիմում է մայրաքաղաքում բնակվող բոլոր օտարական մշակներին և պահանջում է նրանցից յարգել երկրի օրէնքները, որ նրանց աշխատութիւն, հաց և պաշտպանութիւն է տալի։ Հակառակ դէպքում իշխանութիւնն ստիպված կը լինի խիստ միջոցներ գործ դնել պաշտպանելու ժողովրդի շահերն ու նրա ստացուածքների ապահովութիւնը։

Պարլամէնտական բոլոր կուսակցութիւնների օրգանները միաբերան պախարակում են այդ սոցիալական շարժումները։

Ասում են, որ վերոյիշեալ շարժումները երկար ժամանակով պատրաստվում էին ունդարական մշակ դասակարգերի մէջ, որոնցից շատերն օտարականներ և մեծ մասամբ գերմանացիներ են, վերջիններս երբէք չեն էլ թաղցնում իրանց սոցիալական մտքերը, և ամեն տեղ բացարձակ քարոզում են այդ մտքերը։

Վերջին օրերս մի ազնուապետական՝ մեծ նամարտութեան մէջ սպանում է մի խմբագիր, և ահա այդ օրից սկսված, ռամկասոցիալականները շարունակում են իրանց խռովութիւնները։

Մի քանի ուրիշ տեղեկութիւններ էլ հաղորդում են, որ գնալով ցուցմունքներ անողների թիւը պակասում է, հետևաբար և նրանց արած անկարգութիւնները նուազում են. վերջին օրը այդ խռովարարների թիւը այնչափ սակաւ էր որ միայն պօլիցիայի միջամտութիւնը կարողացաւ նրանց բոլորովին ցրվել։ Տեղական իշխանութիւնը յոյս է յայտնում, որ հետևեալ օրը քաղաքը բոլորովին ազատ կը լինի անկարգութիւններից։

Մինչև այժմ Աւստրո-Ունգարիան միակ երկիրն էր, որ ազատ էր համարվում սոցիալական յուզմունքներից, բայց այժմ նա էլ է սկսում վարակվել այդ ցաւով։

Ուրեմն վտանգն ընդհանուր է դառնում, այժմ տեսնենք, թէ եւրոպական պետութիւններն ինչ փրկարար միջոց գործ կը դնեն ազատվելու այդ վնասակար ախտից։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 1 յունվ.

Մեծապատիւ ամօրէն «Մշակ» լրագրոյ. խնդրեմ ձեր յարգելի և ազդասէր թերթերուն մէջ պանդուխտ փոքրիկ յօդուածիս հիւրընկալութեան անկիւնիկ մը շնորհելու բարեհաճէք։

Ինչպէս բոլոր եւրոպական ազգերու յայտնի եղաւ Անտոնեան միաբանից ըրած դիւցազնութիւնք արդի ժամանակիս առ յաղդս իւրեանց, որոնք զարմանալով և միանգամայն մատնանիշ ցուցանելով խրախայս կը կարդային լրագիրներու վրայ իրենց ազգերու ըսելով. ով իտալացիք, նայեցէք մէյմը, դարձուցէք ձեր հայեցուածքը հայոց ազգի վրայ՝ քննեցէք ուշիուշով թէ նոքա ինչպէս քրիստոնէութեան մէջ առաջին եղան և մեզ կարապետ, նոյնպէս ալ ներկայ դարուս մէջ առաջնորդ եղան շատ լուսաւորեալ և բազմաթիւ ազգերու. օտար ձեռքեր, ետ մղելով տէր և պաշտպան կեցան իրենց հնաւանդ իրաւանցը։ Օ՛ն ուրեմն, օրինակ առէք ի նոցանէ դուք ևս, գացէք անոնց կռնակէն, հետևեցէք նոցա շաւղին. բայց ով ձեր ճամբան պիտի լուսաւորէ, դուք էք լոյս աշխարհի, ում ըսաւ որդին Աստուծոյ։ Բարէ բիւրանգամ երջանիկ կըլլայինք և աւելի բաղդաւոր, փոխան 55 տեսակ մենաստուն այրերու, և 40 տեսակ իգասեռներու, որոնց թիւը գրէթէ 14 միլիոնի կը հասնի, որոնք միայն ժողովրդեան վրա ծանրանալով պորտերնին կը բուծանեն՝ երանի թէ մէկ հատ մը ըլար Անտոնեան մենաստանի նման, որոնք միշտ պատրաստ են զոհել ի սէր հայրենեաց՝ և ազգին, ի սէր օտարին չանթերուն դէմ կայնելով կեանքերնին կընքել։

Անշուշտ պարծանք կը համարի հայ անուն կրող մը, երբ սոյն գովեստները կը լսէ, որ եւրոպական լուսաւորեալ և կիրթ ազգերը իրենց անունը բարձրացնելով առաջնորդ կը կոչեն, և յիրաւի մեծ պարծանք. բայց այդ համբաւը ըստանալուն պատճառը ով եղաւ, հարկաւ ձեզ ալ ծանօթ է յարգելի ընթերցող սոյն մենաստանի ազդասիրական ոգին՝ փոյթը՝ եռանդը՝ ջանքը՝ մէկ խօսքով ըսեմ ըրած զոհողութիւնը, որ իւր անդարմանելի վնասովը լուսաւորեց հասարակութեան մը առաջի ճանապարհ, որոնց քայլերը յանդէպս դէպի դահավիժութիւն կը դիմէին. ինչպէս մեր թագաւորութեանց քայքայմանէն զկնի այդպիսի շատ կորուստներ ունեցեր են, որոնցմէ մին ալ այդ պիտի ըլար։

Իւր վնասովն ըսի, այո, նորապէս չորս ալ կային, բայց ոչ ոք ուզեց վնասովել և մանաւանդ աւելի չտիլ և պատիւ ունենալ. սկիզբն անիրաւ չտ և նողկալի պատիւ է նորա համար, երբ իւր ազգը գերի վարելով պիտի ստանայ օտարին ձեռքէն.... այո, պատիւ, ըստացուածք դտնալը հեշտ է և շուտով հոգոյն սրբոյ շնորքին արժանի կըլլանք, երբ ազգը սարկութեան շղթան շարելով ոտքերու տակ բեմ ելլալու Սանդուխ կամ Տիբերիս գետը թափելով կամուրջ չինելու ըլլանք.... բայց հեռի ըլլան և միշտ հեռի սոյն մենաստանէն այդպիսի պատիւներ և հարստութիւնք, ինչպէս ներկայիս սոյնպէս ալ ապադային. աւելի կընարենք Ուկուլինայի պէս սուղութենէ մատերնիս խածելով մեռնիլ, քան թէ ազգին միսը ուտելով պատուով ապրուստ ունենալ։ Ցարգոյ ընթերցողաց կը թողում խորհելն թէ ով իւր վնասով եղբօրը կօգնէ, մանաւանդ ներկայ դարուս մէջ.... բայց այն մենաստուն հանդերձ տուժիւք անձին լուսաւորեց իւր թշուառ ազգը նիւթական լուսով, և պիտի լուսաւորէ կասային լուսով. սակայն մորմոքանօք սրտի կը ստիպուիմ յայտնելու, որն որ գրիչս անգամ առնել չերթար գրելու կամ ըսելու, ողորմեցարուք ողորմեցարուք ո՞ բարեկամք, սոյն մենաստանի պատրոյկն առկայծեր է և մարելու մօտ, ձեզի նման առատասիրտ և միանգամայն ողորմած ազդասէրներու աչ կառկառելուն կը սպասէ. և եթէ իրեն պատրուակին իւղ լեցունողներ չը պակասին ինքի զինքերնին պատրաստ քաջ գիտեն մրցել ի սէր ազգութեան յօգուտ և ի պայծառութիւն Հայաստանեաց եկեղեցւոյն. և պիտի ջանան լուսաւորել իւրեանց ազգը մինչև անգամ քիմիական լուսով...։

Բայց կարծես թէ դաղտնի խրախոյս մը ինձ յուսադրելով կը քաջալերէ. պատրոյկն առկայծեալ մի չիջցի, ուրեմն տայր երկինք որ ի գութ շարժելով մեր աւագ եղբարք Ռուսիոյ հասարակութեան ձեռն կառկառելով այսպիսի անձնուէր մենաստանի մը վերան, որն որ թշնամեաց յարձակմանց դէմ պատուար և զեղծերու յորձանաց դէմ թումպ եղած է և պիտի ըլլայ յաւերժական իրենց ազգին համար։

Վերջապէս այն մենաստուն դայ ժամանակ որ գուցէ շատ հեռու չէ, հանուրց Հայկայ սերունդին և Աստանդեան զարմին ընդունելութեան վայր ըլլալով մեծամեծ ծառայութիւններ ընէ։

Վ. Ռ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Փարիզում 16 (8) մեռաւ Նապոլէոն III-ի արտաքին գործերի մինիստր դուքս Գրամմոն, որ վարում էր այդ պաշտօնը 1870 թուի Ֆրանսպրուսական թշուառ պատերազմի հրատարակվելուց առաջ։

—Նոյն լրագիրներին հեռագրում են յունվարի 2-ից հետևեալը. «Երեկոյեան Լայարդի մօտ օտար պետութիւնների դեսպանների ժողով կայացաւ օսմանեան դատաստանական նոր կանոնադրութիւնը գործադրելու առիթով, որ թիւրքաց լեզուով հրատարակված է։ Դեսպանները վճռեցին խնդրել Բ. Դրան, որ նա առժամանակ վերոյիշեալ կանոնադրութեան գործադրութիւնը դադարեցնի, մինչև որ դեսպանների թարգմանները կարողանան հիմնաւորապէս ծանօթանալ այդ կանոնադրութեան հետ։

—«Neue freie presse» լրագրին Կ. Պոլսից, յունվարի 6-ից հաղորդում են յունա-թիւրքական սահմանի հարցի դրութեան վերաբերութեամբ, որ Սավաս փաշա դիտաւորութիւն չունի պատասխանել յունաց պատգամաւորների վերջին յայտարարութեանը, որի մէջ այս վերջինները յայտնեցին Բ. Դրան, թէ նրանք աւելորդ են համարում կնքէրէնցիայի նոր նիստ նշանակել, որովհետև հաւանական է որ բանակցութիւնները չեն հանի որ և իցէ եզրակացութեան, մանաւանդ որ այս յայտարարութեան մէջ ոչ բանակցութիւնների կտրվելու մասին է յիշված, ոչ յունաց պատգամաւորների Կ. Պոլսից գնալու մասին. այս բանից կարելի է եզրակացնել, որ Յունաստանը չէ կամենում Բ. Դրան հետ դիպլոմատիական յարաբերութիւններ կտրելու պատասխանատուութիւնը իր վրա առնել, և որովհետև Բ. Դուռն ևս մի և նոյն հայացքներն ունի գործի վրա, հաւանական է ուրեմն որ գործերի դրութիւնը կերկարանայ անվերջանալի կերպով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի «Globe» լրագիրը հաղորդում է, որ յունվարի 26-ից նախկին զինուորական մինիստր Դիւ-Բարրայլ վախճանվել է Նիցայում։

***

Փարիզից հաղորդում են լրագիրներին, որ զինուորական մինիստրութեան գլխաւոր գանձապահ Ֆուրնիէ, նորերումս գանձարանի վրա նշանակած քննութեան պատճառով ինքնասպանութիւն գործեց ռէվոլվերով։ Այս անցքը մեծ տպաւորութիւն գործեց և այդ գործի համար խիստ քննութիւն նշանակվեց։

***

«Голосъ» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Մենք լսեցինք որ մեր նշանաւոր նկարիչ-մարինիստ Ց. Կ. Այվազովսկի նորերումս երկու մեծ պատկերներ է վերջացրել, որոնց սիւժէտը վերցրած է Քրիստոֆոր Կոլումբոսի կեանքից և վերաբերում է Ամերիկայի գիւտի պատմութեան։ Այս պատկերներից մէկը, որի մասին հաղորդել են մեզ արդէն թէոդոսիայից, ներկայացնում է սարսափելի փոթորիկ բաց ծովի մէջ։ Կոլումբոսի ուղեկիցները, որոնք նրա հետ միասին լողում էին դէպի աշխարհի նոր մասը, որը գուշակել էր նրա հանճարը, ապստամբվեցան՝ նրանց կարծիքով երկար և անպատակ անցյալ ջրերի մէջ լողալու պատճառով։ Սա համարեա ամենասրտաշարժ բոպէն է նշանաւոր ծովագնացի պատմութեան մէջ։ Միւս պատկերը ներկայացնում է Կոլումբոսի նաւը, որ արդէն երևում է Ամերիկայի ափերից։ Արեգակնային պարզ օր է։ Ծովը հանգիստ շարժվում է։ Նաւի վրա երևում է Կոլումբոսի պատկերը, որ հիացմամբ ողջունում է աւետեաց ափերին։ Բոլոր նրա ուղեկիցները նրա շուրջը ներկայացրած են ծնկաչոք, որոնք վերջապէս համոզվեցան նրա հանճարի և գիտութեան մէջ։ Այդ պատկերներից իւրաքանչիւրը ունի եօթը արշինից աւելի երկայնութիւն և մօտ հինգ արշին լայնութիւն։ Մեզ հաղորդում են որ այս պատկերների բոլոր ֆիգուրաները Այվազովսկին ամենայն աշխատութեամբ է նկարել։ Քիչ ժամանակից երկու պատկերներն ևս պէտք է հասնեն Պետերբուրգ, բայց թէ որտեղ պէտք է հանդէս դուրս բերվեն, դեռ ևս յայտնի չէ։ Ամենից հաւանականն է, որ այդ պատկերները Ակադէմիայի դահլիճներում կը գտնեն տեղ և շուտով սկսվելիք ակադէմիական հանդիսի զարդարանք կը կազմեն։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Русскій Курьеръ» լրագրի հատով ծախվելն արգելված է։ Յունվարի 24-ին Մոսկվայի Սմոլէնսկեան կայարանում այրվեցան բազմաթիւ վագոններ և մի քանի շէնքեր։

ՀԷՐԱԹ, 24 յունվարի (5 փետրվարի։) Էյուբի նախագահութեան ներքոյ ազգային մեծ ժողովը վճռեց կէնքով ընդդիմադրել պարսից կամ անպիացոց յարձակմունքներին և ամեն հնար գործ դնել պաշտպանվել մինչև ռուսաց արշաւանքի վերջը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ երէկ կէսօրից յետոյ ժամը 3-ին Կայսրուհին, Էդինբուրգեան հերցոգուհի Մարիա Ալէքսանդրովնայի, և Մեծ Իշխան Սէրդէյ Ալէքսանդրովիչի հետ միասին, հասաւ Ս. Պետերբուրգ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունվարի 26-ին։ Հաստատում են, որ ախալտեկինեան արշաւանքի առաջնորդ մօտիկ ժամանակներում կը նշանակվի Սկոբելէվ։ «Телеграфъ» լրագիրը բոլորովին դադարից։

ԼՕՆԴՕՆ, յունվարի 26-ին։ Համայնքների ժողովում Ստէնգօտ պատասխանելով Էշբէրիին ասաց. Կաբուլում գտնված ռուսաց դրագրութիւնը գտնվում է կառավարութեան ձեռքին. դրագրութեան պարունակութեան մասին տեղեկութիւններ հրատարակել կամ հաղորդել կառավարութիւնը նպատակայարմար չէ համարում։

ԼՕՆԴՕՆ, յունվարի 27-ին։ Գահական ճառը հաստատում է արտաքին յարաբերութիւնների մէջ եղած բարեկամութիւնը։ Անգլիան խաղաղութիւնը ապահովված է համարում Բերլինի դաշնագրի կապելուց յետոյ. կառավարութիւնը ցանկանում է բարեկամ մնալ ազգանցիների հետ։ Ճառը յիշում է նոյնպէս այն միջոցների մասին, որը կառավարութիւնը գործ է դրել կարիքները թեթևացնելու համար Իրլանդիայում։ Ճառը յայտնում է այն նախագծի առաջարկվելը, որը թեթևացնում է հողային սեփականութեան մէկ ձեռքից միւս ձեռք անցնելը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կազմած	— ր.	25 կ.
— նոյնը անկազմ	— »	15 կ.
Թաւամաղ մեղու՝ պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի	— »	40 կ.
Կարմիր լապտեր՝ պատկերազարդ և կազմած, թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի	— »	50 կ.
— նոյնը առանց կազմի	— »	30 կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	— »	60 կ.
Մօրես կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառուս-թարգմ. Գաղիերէնից.	1 »	— կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. թարգ. Գաղիերէնից	4 »	— կ.
Դիւաբնակ բլուր. հեղ. Էօժէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիերէնից	2 »	75 կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Ասատուրի	— »	60 կ.
Սահմանադրութիւն և Հայ ժողովուրդն Հր. Ասատուր	— »	35 կ.
Մի կաթիլ արտասր, զոր կը հեղու. Սիսակ հայ մելիքին վրայ	— »	35 կ.
Խօսք զՀայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզակցի	— »	70 կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձտեանց	1 »	25 կ.
Մանանայ նոր հեղինակի	1 »	75 կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմեան Հայրիկ	1 »	45 կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	— »	75 կ.
Վանդոյժ. կուժ մի ջուր իւր այրած Հայրենեաց վերայ կ'սրսկէ Խրիմեան Հայրիկ	— »	20 կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վէհաժողովէն, հեղ. Մ. Զերաղի	— »	40 կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ.	— »	60 կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու.	— »	50 կ.
Հրատարակութիւն Զարմայր Մսերեանի		
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս.	1 »	— կ.
Նղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	— »	30 կ.
Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ	— »	35 կ.
Հսկայական ձեռքեր Անգղիական վէպ, պատկերազարդ	— »	10 կ.
Իշխան Բէհբութեանի հրատարակութիւններ		
Վոյքի իմ վեչէր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	— »	40 կ.
Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	— »	25 կ.
Աշնանային երեկոյ գիւղում, վոդրվել մէկ արարուածով.	— »	25 կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	— »	40 կ.
Ժանս և Ժանէտ, օպերա-վոդրվել, մէկ գործողութեամբ.	— »	40 կ.
Պառաւներին խրատ. վոդրվել մէկ արարվածով Մ. Տ. Գ.	— »	50 կ.
Տիկինը նրան սպասում է, կատակերգութիւն մէկ արարուածով.	— »	30 կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով.	— »	40 կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	— »	30 կ.
Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	— »	30 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պետոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю"

10—1



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գունիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնվի հասարակութեանը երբէք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՍԿԱՅ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻԿՆԵՐ ՄԱՐԿԻՈՍ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻՆ և ՄԱՐԿԻՈՍՈՒՀԻ ԼՈՒԻՍԸ: Տեղերի գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեխաները կէսն են վճարում:

1—5

ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄՆԱԲՈՑԺ ԲԺԻՇԿ Լ. Ի. ԷԴԵԼՖԷԼՏԻՑԻՄԻ թոյլ են տուած Մոսկվայի ՐԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՑ: Այդ միջոցները մեծ **ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ** գտել և առաջարկվում են իբրև **ԱՄԵՆԱԼԱՒ** առողջապահական **ՄԻՋՈՑՆԵՐ** բերանի և ատամների համար: Կարելի է **ԱՏԱՄՆԵՐԸ** պահպանել ՓՕՇԻԱՆԱԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐՁՈՒՆԲԻ ՔԱՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Ատամնաբոյժ բժիշկ Ա. Ի. Աղելգէյմի ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՍՕԿՕԼՈՎԻ տանը:

ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ա. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԱՀԵՍՏՈՒՄ:

Ծախողների ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

1—10 (12)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

1880 թ. Յունվարի 15-ից կ'հրատարակուի Երևանում շաբաթմէկ անգամ

«ՊՍԱԿ»

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

«ՏԲՂԹԹ»

Տարեկան գինն է . . . 4 ռուբլի:
Կէս տարեն. . . . . 3 ռուբլի:

Ցանկացողները կարող են ստորագրվել ուղղակի խմբագրատանը, Գէորգեան և ընկեր տպարանումը: Կամ Աբգար Գալամիրեանցի խանութումն: Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտք դիմել ուղղակի խմբագրին հետևեալ հասցէով Въ г. Эривань Редактору газеты „ПСАКЪ" **Васаку Пападжанову.**

Խմբագիր-Հրատարակիչ՝ Դր. Վ. Պապաջանեանց.

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

ԱՐԴԷՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1880

Փոքրագիր ՕՐԱՑՈՑՑ Ն. Թ. Ք.
Սկզբումն գեղաքանդակ պատկերք՝ Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ
Տ. ՆԵՐՍԷՍԻ
Ե. Քարտուղարին պատգամ. Հայոց 'ի Բերլին՝
ՄԻՆԱՍԱՅ ՁԵՐԱՋ
Վերջումն սպիտակ երեսքյիշատակարանի համար: Գինն է ամենայն տեղ 15 կոպ.
Բ. Մեծագիր
ՕՐԱՑՈՑՑ
1880 Ն. Թ. Ք.
Սկզբումն գեղաքանդակ պատկեր՝
ՍՐԲՈՑՆ ՏՐԴԱՏԱՅ
Բոլոր Օրհ.՝ Հրց.՝ Մկ.՝ և Հմբ. գրուած են կարգաւ և ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՅ
Ե. Տ. յաւելուածով
Սկզբումն գեղեցիկ պատկեր՝
ԴԻՏԱԿԱՒՈՐ ՁԿԱՆ

Գինն է մինչև 600 վ. . . 30 կ.
Իսկ նորանից բարձր՝ . . . 35 կ.

Դումարով գնողաց զիջումն կը լինի:
Ա. Գուլամիրեանց
ՅԵՐԵՒԱՆ

Ակադեմիայում լաւ վկայականով ուսումը աւարտած մի երիտասարդ հաշուապահութեան և առևտրական թուաբանութեան դասեր է տալիս, նոյնպէս պատրաստում է երեխաներին բէալական դպրոցներում առանդվող բոլոր առարկաներից: Պէտք է դիմել Զուբալովի քարվանսարան Գէորգեանի գրասենեակը:

2—3 (2)

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԼՈՒԲԻ վարչութեան խորհուրդը խնդրում է կլուբի պ.պ. անդամներին ներկայ գտնվել կլուբի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որ նշանակված է ՇԱԲԱԹ յունվարի 26-ին, երեկոյեան 7 ժամին կլուբի վերաբերեալ մի քանի ՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՐՑԵՐ քննելու համար:

3—4

ՄՕԶԴՕՔԻ

Օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ շահաւոր պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը Յ. Մէլիք-Յակոբեանին պայմանների մասին խօսելու համար:

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՀԱՍՈՒԹԱՒՈՐՆԵՐ (находятся): Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑԻ ԲԱՂՑԱՒԵՆԻԲԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ, Միխայելեան կամուրջի վերայ:

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հատը ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետևեալ տեղերում. «Կարդանախի» մագազինում (Արծրունու տանը, Դվորցովի փողոցի վրա, պ. Նադարբէգովի մօտ), «Կովկաս» հիւրանոցի տակ (պ. Դէմիրեանցի ծխախոտի խանութում), Զաքարիա Գրիգորեանի զրավաճառանոցում (Միխայլեան կամուրջի մօտ) և դերձակ Դեկարխանեանի մօտ, Բէալական դպրոցի դիմացը:

ԲԵՐԼԻՆԻ ակադեմիայի ԻՆԺԵՆԵՐ Կ. Կ. Կելլինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ է յանձն առնում: Հասցէն Վարանցովսկայա Նաբերեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԿՈՒՄ:

4—5 (3)

Дозволено Цензурою 28 Января 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона